ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հունիսի 2023 թվականի թիվ 121 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 7-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի ԹԻՎ 296-Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ԹԻՎ 134-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 37-րդ հոդվածներով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012 թվականի հունվարի 18-ի թիվ 7-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 18-ի թիվ 296-Ա և 2021 թվականի ապրիլի 30-ի թիվ 134-Ա որոշումները:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

07.06.2023

X

ք. Իջևան

7 հունիսի 2023թ.

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի 2023 թվականի

07 հունիսի թիվ 121 –Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Նարեկ Ղուշչյան – հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ,

Աղաբեկ Գալստյան – հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ,

Յուրա Բազինյան – հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի օգնական,

Վիկտոր Աբազյան – հանձնաժողովի անդամ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ,

Գագիկ Մատինյան – հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ,

Ասքանազ Բաբլումյան - հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ,

Միսակ Մելքումյան - հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ, ենթակառուցվածքներին, բնակչության գույքին հասցված վնասների գնահատման պատասխանատու,

Վաղարշակ Սուքոյան - հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման պատասխանատու,

Ռուբեն Տիգրանյան - հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ, բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատման պատասխանատու:

Համայնքների ղեկավարներ– համաձայնությամբ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ